գրուած են, և ի մասնաւորի նախորդ ռէժիմին՝ յաջողած են տալ Գրաքննութեան դժուարաւ փրկուելիք խել մը ազգային-գրական գործեր, զոր օրինակ «Սանասարեան վարժարանի պատկերազարդ քառամեայ Տեղեկագիրը», Կիլիկիոյ Սահակ կաթողիկոսի եւայլ կոնդակներ, ևն.: — Գրաշարապետ՝ Վահան Տէօվլէթեան:

155. "**Ճիճու**,, տպարանի հիմնադիրն է ՄԻՀՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ՝ 1870ին ծնած Թալաս, որուն Վարդ-Պատրիկեան վարժարանէն շրջանաւարտ: — Պոլիս գալով, 1903ին Պապը Ալիի պողոտային վրայ կը հիմնէ տպարան մը՝ զայն գնելով Միքայէլ Սարըեանէ: — Իր տպագրած բազմաթիւ ատձկերէն գիրքերէն զատ՝ կան հետեւեալները. — Մասիս (Եռօվք Արմէն) 1907-8, Այգեկութք (Ա. Փանոսեան, 1903), Բիւրակն, Փունջ, Առժամեայ կանոնագիր ոչխարներու գինագրութեան (1909) եւայլն:



Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

☞ 114 թուականաւ ներկայացուած ՕԳՍԷՆ ԽՕՃԱՍԱՐԵԱՆԻ տպարանէն լոյս ընծայուածներուն վրայ պէտք է աւելցունել հետեւեալն՝ առանց թուականի. — Զուարճախօսիք Հայոց. «Գրեց Եսայի Վարդապետ Ղեւոնդեան Ապահունեանց» — Գործ Ա՝ Ժողովրդական Ընկերութեան Պալարտ, (էջ 55):

## 10 ՅՈՒԼԻՍ 1908

Գրաքննութիւն ի սպառ փարատուած և ինքնին անմեղ բառերու և տառերեանց խեղդուած ցանցորդում մը, ազատ և հրաշունչ յօդուածներ ամէն թերթի մէջ. ՕՍՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ առբած գինովութեան տակ՝ աքսորէ և արտասահմանէ դարձողներու ճառախօսումներ, բարփորներ, ծափեր, կամրակներու վրայ թթուած տարագոյն ժապաւէններ և օդին մէջ ծփացող դրօշներ ամենուրեք: Աղիկամի կերպով խմբագրուած՝ յաճախ իրերապարա թերթերու, արագօրէն դրոշմուած բուցիկներու և պրակներու ողողում մը հրապարակին վրայ՝ ձեռքէ ձեռք խլուող Բ. Գ. տիպ մեծատառ պոռոտ **խալէ**ներու հետ: Ելեւեցին թեմ՝ աշխարհական քարոզիչներու, և բատրոնի դուռներ կոնակի վրայ բաց՝ սանձարձակ երգողներու բերաններուն նման: Հասնողը բազկամամալ մը ձեռք ձգած է՝ տպարանի պէս բան մը հիմնելու և շառաբեր գրքոյկներ լոյս ընծայելու համար. մերկ թուղթերու որակին ու գոյնին նայող չկայ, անոնց անագին սպառումը կայ միայն՝ ու ի քրքել ակամ պխոփ բազմին «այժմէութիւն ունեցող» պատկերներ ու պօսպօսող խօսքեր քմայական:— Այս էր վիճակն Ազատութեան հռչակման վաղորդայնին խել, մինչ քառորդ դարէ հետէ Գրաքննութեան կապարեայ լուծին տակ կքկռացող Մամուլը մէկէն ի մէկ թօթափած իր ծանրութեանն՝ կ'սկսէր անկաշկանդ գործել: — Ատենօք տպագրուած, ապա **Մուզիր** նկատուած հայերէն գիրքերու և պատկերներու անարգել վաճառում մըն է որ տեղի կ'ունենայ խանութներու ցուցափեղկին, փողոցներու անկիւն, և «Մէարիֆ»ի մթերանոցը — զոր տարիներու ընթացքին՝ ակաղձուն բռած էին Հայերու մատենադարաններէ յափշտակած վերցուած անհամար հատորներ ու հանդէսներ, — կը դատարկուի մէկ անգամէն: — Ամէն արուարձան իր քանի մը ակումբներն ու լսարանները կ'ունենայ. ամեն հայ «կուլտուրական» զարգացման հետամուտ կ'երեւի. Գիրքին փառքն է որ կը տարփողուի ամէն տեղ, և ահա հին սպառած երկասիրութիւններ վերստին կը հրատարակուին